ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան, Ս. Դավթի 87ա

« 10 » հունվարի 2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ No. 27/07-Ա

Չկատարված հարկային պարտավորությունները գանձելու մասին

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս քննարկելով անհատ ձեռնարկատեր Արշակ Ավոյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Համաձայն հարկային մարմնում առկա անձնական հաշվի քարտի տվյալների անհատ ձեռնարկատեր Արշակ Ավոյանի (ՀՎՀՀ՝ 54657382, պետական գրանցման համարը՝ 94.923552, անձնագիր՝ AN0339918, հասցե՝ Արագածոտնի մարզ, Ներքին, Բազմաբերդ 12փ. 24) չկատարված հարկային պարտավորությունը «13» դեկտեմբերի 2018թ.-ի դրությամբ կազմել է 3.085.853 դրամ, որից ապառք՝ 1.075.535 դրամ, տույժ՝ 2.010.318 դրամ:

Վերոհիշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, հարուցվել է վարչական վարույթ չկատարված պարտավորությունը գանձելու վերաբերյալ՝ վարչական ակտ ընդունելու նպատակով, որի մասին «13» դեկտեմբերի 2018թ.-ին հարկ վճարողը ՀՀ ինտերնետով ծանուցման պաշտոնական կայքում տեղադրելու միջոցով պատշաճ կերպով ծանուցվել է, չի ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար և որևէ բացատրություն չի տվել:

Արդյունքում սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված հարկային պարտավորությունը կազմում **3.085.853 դրամ**, որից՝

ԱԱՀ-ի գծով պարտավորությունը կազմում 1.829.178 դրամ, որն ամբողջությամբ տույժի գումար է, որն առաջացել է իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ և ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածներով հաշվարկված տույժերից,

եկամտային հարկի գծով պարտավորությունը կազմում է 28.727 դրամ, որից ապառք՝ 23.920 դրամ, տույժ՝ 4.807 դրամ, որն առաջացել է 2018 թվականի փետրվար ամսվա հաշվարկից և ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածով հաշվարկված տույժերից,

շրջանառության հարկի գծով պարտավորությունը կազմում 1.161.750 դրամ, որից ապառք՝ 986.415 դրամ, տույժ՝ 175.335 դրամ, որն առաջացել է 2018 թվականի 1-ին եռամսյակի հաշվարկից և ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածով հաշվարկված տույժերից,

սոցիալական վճարի (ամսական) գծով պարտավորությունը կազմում է 6.198 դրամ, որից ապառք՝ 5.200 դրամ, տույժ՝ 998 դրամ, որն առաջացել է 2018 թվականի փետրվար ամսվա հաշվարկից և «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի հոդվածով հաշվարկված տույժերից:

սոցիալական վճարի (տարեկան) գծով պարտավորությունը կազմում է 60.000 դրամ, որն ամբողջությամբ ապառքի գումար է, որն առաջացել է 2017 թվականի տարեկան հաշվարկից:

Գանձման ենթակա չկատարված պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր, որոնք ենթակա են կատարման մինչև սույն որոշման կատարման օրը՝ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի հետ միասին:

ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է, որ հարկը պետական և (կամ) հասարակական կարիքների բավարարման նպատակով Հայաստանի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ վճարվող պարտադիր և անհատույց գումար, որը վճարվում է հարկ վճարողների կողմից՝ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով, չափերով և ժամկետներում:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների հիմնական աղբյուրը հարկային եկամուտներն ու պետական տուրքերն են, որոնց հավաքագրման շնորհիվ են կատարվում նույն օրենքով նախատեսված հանրային, պաշտպանության, հասարակական, անվտանգության, դատական գործունեության և այլ ոլորտներում նախատեսված ծախսերը: Նշվածից ելնելով և հաշվի առնելով պարտավորությունների գանձման կարևորագույն հանրային նշանակությունը՝ **սույն որոշումը ենթակա է անհապաղ կատարման**:

Սույն որոշումը անհապաղ չկատարելը բավարար հիմք է տալիս ենթադրելու, որ հարկ վճարողը կարող է թաքցնել, փչացնել կամ սպառել հարկային մարմնի ընդունած իրավական ակտի կատարման համար անհրաժեշտ գույքը, ինչի արդյունքում հարկային մարմնի ղեկավարը ՀՀ Հարկային օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու մասին հանձնարարագիր հրապարակել:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 64-րդ, 66-րդ կետերով, 398-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերով, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 9-րդ մասով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Անհատ ձեռնարկատեր Արշակ Ավոյանից գանձել **3.085.853 դրամ** պարտավորության գումար:
2. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ՀԿ ապահովող ծառայություն:
3. Որոշման օրինակն եռօրյա ժամկետում ուղարկել հարկ վճարողին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն հարկ վճարողի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու կամ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրելու օրվան հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70, 71 հոդվածներով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ Վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

Ստացա որոշման օրինակը _____ _____ _____

Ստորագրություն | հարկ վճարողի /կամ ֆիզ. Անձի/ պաշտ. Անձի անուն ազգանուն | ամսաթիվ

Կատարող՝ ԻՎ ՀԳ բաժին,
գլխավոր մասնագետ
Հրաչ Մուրադյան, հեռ.0281 39717